


Փաստ. անվանումը	Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի գործունեության կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-22-01
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի ղեկավար



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
12/12/2014	Փոխվել է կենտրոնի անվանումը, ավելացել են գործառույթներ	Մուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ



1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Եվրասիա միջազգային համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնը Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն է նպաստել ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչակազմի փոխանակման ծրագրերին, նպաստել Համալսարանի և միջազգային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, միջազգային ուսանողների հավաքագրմանը, նպաստել Համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական կարողությունների զարգացմանը:
- 1.2. Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնը սույն կարգով սահմանված խնդիրների լուծման, իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցում է Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ (այդ թվում՝ հասարակական, միջազգային, առևտրային և այլն)՝ սահմանված կարգի համաձայն:
- 1.3. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ Համալսարանի կանոնադրության և սույն կարգի հիման վրա:
- 1.4. Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է Համալսարանի միջոցներով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներով:
- 1.5. Սույն կարգի մեջ փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը և լուծարումը իրականացվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

2. Միջազգային կապերի և հետազոտությունների Կենտրոնի խնդիրները

Կենտրոնի խնդիրներն են՝

- 2.1. Համալսարանի ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչակազմի փոխանակման ծրագրերի ուղղությամբ համալսարանում տարվող աշխատանքների համակարգումը, կազմակերպումն ու ամփոփումը,
- 2.2. Համալսարանի և արտահամալսարանական կառույցների միջև համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպումը,
- 2.3. Փորձի փոխանակման շրջանակներում այլ համալսարանների միջազգային կենտրոնների, ինչպես նաև տարբեր մասնագիտական միավորումների հետ համագործակցումը,
- 2.4. Արդի սոցիալական հիմնախնդիրների, ախտորոշումը, հետազոտությունների կազմակերպումը,
- 2.5. Արդի սոցիալական հիմնախնդիրների հետազոտման արդյունքում ստացված տվյալների և վերլուծությունների տպագրությունն ու տարածումը,
- 2.6. Հետազոտություններ իրականացնող տեղային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը,
- 2.7. Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողներին և աշխատակազմին, ըստ անհրաժեշտության, փոխանցել հետազոտական հմտություններ և տրամադրել խորհրդատվություն:

3. Միջազգային կապերի և հետազոտությունների գործառնությունները

3. Կենտրոնի գործառնություններն են՝

- 3.1. Համալսարանի ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչակազմի փոխանակման ծրագրերի հետ առնչվող ռազմավարական և կազմակերպչական հիմնախնդիրների բացահայտումն ու վերլուծությունը, համապատասխան ծրագրերի կազմումն ու ներկայացումը Համալսարանի ռեկտորին, ինչպես նաև մասնակցությունը այդ ծրագրերի իրականացմանը,
- 3.2. Սեմինարների, կլոր սեղանների, կոնֆերանսների, գիտաժողովների, նպատակային և լրացուցիչ պատրաստման և վերապատրաստման դասընթացների և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական, հետազոտական ու այլ միջոցառումների կազմակերպումը, համապատասխան դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցությունը,
- 3.3. Տարբեր հայտարարությունների, տեղեկատվական նյութերի տպագրումը և տրամադրումը,
- 3.4. Տեղեկատվական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ համապատասխան տվյալների հենքերի, էլեկտրոնային խմբերի և համացանցային այլ միջոցների կազմակերպումը,
- 3.5. Պետական և մասնավոր կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր հիմնադրամների, միջազգային կառույցների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպումը,
- 3.6. Միջազգային օրերի, միջազգային կազմակերպությունների ներկայացումների, տարբեր հյուրերի փոխայցելությունների և այլ միջոցառումների կազմակերպումը,
- 3.7. Միջազգային կազմակերպությունների հետ համաձայնագրերի և պայմանագրերի կնքման առաջարկությամբ գիտական խորհրդում հանդես գալը, դրանց իրականացման ապահովումը,
- 3.8. Միջազգային կազմակերպությունների հետ փորձի փոխանակման և կայուն կապերի հաստատումը, համատեղ հետազոտական աշխատանքների կազմակերպումը,
- 3.9. Համալսարանի ռեկտորատին համապատասխան զեկույցների և առաջարկությունների ներկայացումը,
- 3.10. Համալսարանի ամբիոնների և այլ ստորաբաժանումների կողմից իրականացվող և կենտրոնի խնդիրներին առնչվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունը, ընդհանուր համակարգված մոտեցումների և ծրագրերի մշակումը,
- 3.11. Ուսանող-դասախոս համատեղ հետազոտական ծրագրերի, գիտաժողովների, համաժողովների կազմակերպումը,
- 3.12. Դրամաշնորհային ներքին ծրագրերի հայտարարումն ու մրցութային հիմունքներով լավագույն նախագծերի ընտրությունը, նախագծի իրականացման ընթացքի մոնիտորինգը,
- 3.13. Հայաստանի և արտերկրի այլ բուհերի նմանօրինակ ստորաբաժանումների հետ համագործակցությունը և փորձի փոխանակումը, ինչպես նաև

Համալսարանի կանոնադրությունից և սույն կարգից բխող այլ գործառնությունների իրականացումը:

4. Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

- 4.1. Կենտրոնի աշխատանքների համակարգումը Համալսարանի ռեկտորի համապատասխան հրամանով վերապահվում է Համալսարանի պրոռեկտորին:
- 4.2. Կենտրոնը ղեկավարում է կենտրոնի պատասխանատուն, որին պաշտոնի նշանակում և ազատում է Համալսարանի ռեկտորը: Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում է Համալսարանի ռեկտորը:
- 4.3. Կենտրոնի պատասխանատուն`
 - 4.3.1. կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է ընթացիկ գործունեությունը, մասնակցում Համալսարանի աշխատանքներին, Համալսարանի գիտական խորհրդում և մեթոդական խորհրդում հանդես գալիս համապատասխան հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով,
 - 4.3.2. ապահովում է կենտրոնի հիմնական գործառնությունների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, ապահովում կենտրոնի և այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունները,
 - 4.3.3. կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկույցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ գրություններ և փաստաթղթեր,
 - 4.3.4. կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության` Համալսարանի ռեկտորին կամ պրոռեկտորին ներկայացնում է համապատասխան զեկույց և առաջարկություններ Կենտրոնի գործունեությանը առնչվող աշխատանքների վերաբերյալ,
 - 4.3.5. ներկայացնում է Կենտրոնը արտաքին շփումներում, կենտրոնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նախապատրաստում և ստորագրում համապատասխան համագործակցությանն առնչվող փաստաթղթեր` դրանց մասին պարբերաբար զեկույցելով և համաձայնեցնելով Համալսարանի ռեկտորի և պրոռեկտորի հետ,
 - 4.3.6. կազմակերպում է Կենտրոնում տարվող գործավարությունը, ինչպես նաև կատարում է Կենտրոնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ,
 - 4.3.7. պատասխանատվություն է կրում կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար,
 - 4.3.8. ներկայացնում է առաջարկություն իր բացակայության ժամանակ իրեն փոխարինող աշխատակցին տնօրենի պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ: